

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԸ՝ ԲԱՍԿԵՐԻ ԵՐԳԻ ԹԱՐԳՄԱՆԻՉ

«Երբ թերթերում կարդում եմ, թե ինչպես արյունարբու գեներալ Ֆրանկոն և վայրագ մոլան, միջնադարյան այս խավարակուտ հոգիները, գերմանական և իտալական գազազած ֆաշիստների հետ խեղդեցին քաջարի բասկերի նորանվաճ ինքնավարությունը, ռումբերի հրեղեն հեղեղի տակ կործանեցին, աճյուն դարձրին բասկերի հոյակապ մայրաքաղաքը՝ Բիլբաոն և այս առեղծվածային ժողովրդի մշակույթի վայրը՝ նվիրական Գերնիկան - խորին ցավով և սրտի մորմոքով վերհիշում եմ Փարիզի իմ բասկ բարեկամներին... Ո՞վ գիտե՝ ինչ եղան նրանք, այս արյունոտ փոթորկի մեջ արդյոք ի՞նչ էր ճակատագրված նրանց համար...»¹, - այսպիսի մտորումներով էր տոգորված Ավ. Իսահակյանի մեծ սիրտը, որը սրբորեն հավատում էր բասկ հայրենասերների պայքարին հանուն ժողովրդի ազատության՝ ստեղծելով ինքնակենսագրական «Գերնիկայի նվիրական կաղնին» պատմվածքը:

1935 թ. Լամանշի ծովափին Իսահակյանը ծանոթանում է բասկ-երաժըշտագետ Թեոդորի հետ: Նրանց միջև հաստատվում են բարի, մտերիմ հարաբերություններ: Բանաստեղծի համար առանձնապես հուզիչ էր, երբ «մշտապես տրամադրված մաեստրո Թեոդորը երգում էր բասկերի ժողովրդական տաղերից, որոնք խոսում էին իմ սրտից. այնքան նման էին մեր մելոսին» (էջ 264-265): Գուցե դա ինչ-որ հոգևոր ազդակ էր, որ դրդեց Իսահակյանին ծանոթանալ բասկերի պատմությանը, նույնիսկ մի կարճ շրջան ուսումնասիրել բասկերի լեզուն...

Նա գերագույն ակնածանքով է մտորում այդ ազգի մասին. «Անհիշատակ ժամանակներից եկած և մինչև օրս հարատևած այս մի ավի ժողովուրդը գիտության համար մնացել է տակավին անլուծելի առեղծված: Նրանց ծագումը անհայտ է, նրանք չեն պատկանում մեզ հայտնի ոչ մի ցեղային խմբավորման: Նրանց լեզուն անկախ դիրք ունի և չի հարաբերվում հին ու նոր ոչ մի լեզվի հետ» (էջ 265)²: Փարիզում մաեստրո Թեոդորը Իսահակյանին ծանո-

¹ Իսահակյան Ավ. 1959, Երկեր, հ. III, Երևան, էջ 263: Այսուհետ բոլոր բնագրային մեջբերումները կլինեն նույն հրատարակությունից՝ մեջբերման ավարտին նշելով միայն համապատասխան էջահամարները:

² Նկատի ունենանք, որ հետագայում՝ 1994-1998 թթ., Երևանում հրատարակվել է «Արաքս» հայ-բասկական միջազգային գիտական հանդեսը (խմբագիր՝ Վահան Սարգսյան (1954-2011)): Տե՛ս նաև նույն հեղինակի Բասկերի ծագման առեղծվածը և Հայկական լեռնաշխարհը, Երևան, 2000, ինչպես նաև Հայ-բասկական լեզվական առնչություն-

թացնում է բասկ երիտասարդների հետ, որոնք Ֆրանսիայում ապաստան գտած փախստականներ էին: Այս կրակոտ, անմիջական հայրենասերների զրույցները՝ բասկերի դարավոր պայքարի մասին հանուն իրենց երկրի ազատության, ինքնավարության, մեծ տպավորություն են թողել բանաստեղծի վրա: Բասկերը պատմում են իրենց ազգի սրբատեղի Գերնիկայի մասին. «Գերնիկան բասկերի սիրտն է: Այնտեղ անհիշատակ ժամանակներից կանգուն է նվիրական կաղնին: Դարերի մշուշից է բուսել նա... Ինչքա՞ն կայծակներ են, դարերի մեջ, պայթել նրա կատարին, ինչքա՞ն փոթորիկներ կոտրել են նրա ճյուղերը, բայց միշտ դալար է նա, այդ հսկան, միշտ կանգուն է մնացել, միշտ հաղթական: Նա մեր կայունության, կյանքի, ազատության խորհրդանիշն է» (էջ 269):

Բոլոր բախտախնդիր վիճակները բասկերը լուծել են այդ սրբազան կաղնու տակ, «երդվել են իրենց արյունը թափել՝ ջախջախելու ֆաշիզմը» (էջ 270), երգել են իրենց հին երգը՝ Գերնիկայի սրբազան կաղնուն նվիրված: Իսահակյանը ստեղծում է այդ երգը՝ մի ոգեշունչ բանաստեղծություն՝ գեղեցիկ դիթամիկ ներդաշնակությամբ, որն արտացոլում է խիզախ բասկերի պատրաստակամությունը՝ պաշտպանելու իրենց ազատությունը: Ավ. Իսահակյանի «բասկերի երգը», օգտագործելով կերպարային յուրահատուկ համակարգ, այնքան համոզիչ էր արտացոլում ժողովրդի ազգային գծերը, որ դրդեց մեզ «բասկերի հետքերի» որոնումներին:

«Աղբյուր» ամսագրում մենք հայտնաբերեցինք ազգությամբ բասկ իսպանացի գրող Արտուրո Կամպիոնի (1854-1937) «Բասկական լեգենդա» պատմվածքին՝ թարգմանված ռուսերենից³: Այս գործն առանձին գրքույկով հրատարակվել է 1890 թ. Թիֆլիսում:

Առասպելները, պատումները, լեգենդները Պիրենեյան թերակղզու փոքրաթիվ ազգերի՝ բասկերի, կատալոնացիների և գալիսիացիների գրականության մասն էին իրենց պայքարում՝ հանուն ազատ, ինքնուրույն գոյատևման: Զ.Ի. Պլավսկինը «Իսպանիայի բազմազգ գրականությունը» հոդվածում նշում է. ««Փոքր» ժողովուրդների մշակութային գործիչների առաջ դրված էր այդ մշակույթների ինքնուրույն գոյատևելու իրավունքը պաշտպանելու խնդիրը: Պատահական չէ, որ այդ ժողովուրդների գրականությունում այդպիսի երևացող տեղ է գրավում իրենց հերոսական անցյալի պատմական և լե-

ների հարցը լեզվաբանության մեջ, Երևան, 2002: Իր աշխատություններում Վահան Սարգսյանը բազմաթիվ առնչություններ է տեսնում հայերենի և բասկերենի միջև:

³ Աղբյուր, Թիֆլիս, 1890, N 8-9: Ռուսերեն բնագիրը տե՛ս «Газета А. Гаттыка», Москва, 1890, N 2:

գենդար թեման»⁴: Ա. Կամպիոնի լեգենդը լիովին համապատասխանում է այդ չափանիշներին. հնադարյան բասկերը ներկայացված են որպես ազգի նվիրյալներ, խիզախ հերոսներ, որոնց համար առաջնային նպատակը ժողովրդի անկախությունն է: Նրանք վոնդում են Հռոմի դեսպանին՝ հրաժարվելով կատարել ազգը նսեմացնող պահանջները: Հավաքվելով իրենց փառապանծ, նվիրական կաղնու տակ՝ բասկերը երդվում են մոռանալ թշնամանքը, բոլոր անձնական վեճերը և միավորվել հանուն հայրենիքի լուսավոր ապագայի: Այդ պահին ժայռի գագաթին հայտնվում է մի գեղեցիկ աղջիկ, որը երգում է ազգային հնադարյան երգը, իսկ ամբոխը ծնկաչոք լսում է նրան: Հեղինակը ներկայացնում է բասկերի երգի արձակ շարադրանքը: Ավ. Իսահակյանի ստեղծած բասկերի երգի և Ա. Կամպիոնի երգի համեմատական վերլուծությունը թույլ է տալիս մեզ համոզվել այդ տեքստերի հարազատության մեջ: Մենք ենթադրում ենք, որ Կամպիոնի՝ բասկերի երգի արձակ օրինակը որպես տողացի է ծառայել Իսահակյանի չափածոյի ստեղծման համար: Ստորև ներկայացնում ենք Ավ. Իսահակյանի երգը և Ա. Կամպիոնի արձակ երգի համապատասխան հատվածների զուգադրումը⁵:

Զետեղելով բասկերին նվիրված երգը պատմվածքի կենտրոնում՝ Իսահակյանը, մեր կարծիքով, առանձնակի ուշադրություն է դարձրել այս գործին: Անթերի, անչափ մանրակրկիտ, խնամքով է մոտեցել բանաստեղծը Կամպիոնի բնագրին՝ պահպանելով բասկերի հարազատ նկարագիրը, կերպարային կուռ համակարգը, որը վառ արտահայտվել է նրանց մշակույթին բնորոշ ազգային կերպարանքի համոզիչ վերարտադրումով՝ «ջխոնարիվող վեհ կաղնի», «քաջ հովիվներ», «գեղեցիկ պատանիներ», «լուսեղեն աղջիկներ», «երկաթե լեռներ», «ազատության աստղ» և այլն:

«Գերնիկայի նվիրական կաղնին» Վարպետը ստեղծել է 1937 թ. հոկտեմբերին՝ Գերնիկայի ոչնչացումից հետո: Իր բասկական երգով Իսահակյանը հիշեցրեց այդ ազգի փառապանծ անցյալը և հավերժություն մաղթեց Գերնիկայի նվիրական կաղնուն և բասկ ժողովրդին:

⁴ Расы и народы, Ежегодник, Москва, 1980, N 10, с. 219:

⁵ Բոլոր տողացիների տեքստը տե՛ս Աղբիւր, նշված հրատարակությունը, էջ 337, ինչպես նաև Արտուրո Կամպիոն, Բասկական լեգենդա, Թիֆլիս, 1890, էջ 13-14: Մեջբերումներում պահպանել ենք հրատարակության ուղղագրությունը:

Իսահակյան Կամպիոն

Մեր դաշտերում թափառում են Քաղցած գայլեր ոռնալով: Ու ակնդետ մեր հոտերին՝ Որս են ուզում ոռնալով:	Անտառներում հավաքվում են գայլերը: Նրանք քաղցած են, որս են փնտռում և շրջակայքը թնդացնում են իրանց օռնոցով:
Քաջ հովիվներ, արթո՛ւն կացեք, Մոտ են նրանք մեզ արդեն, Քաջ հովիվներ, ոտքի՛ ելեք, Մեր հոտերը չճնջվեն:	Արթո՛ւն կացեք, հովիվներ՛ր, եթե դուք քնեք, կը ոչնչացվին ձեր հոտերը. արթուն կացեք և սրեցեք ձեր տապարները ու տէգերը, որ կարողանաք կոտորել գայլերին:
Այս ոսոխներն սպառնալից՝ Հագել են գեղեցիկ ու գրահ, Ի՞նչ են ուզում մեր սուրբ հողից, Որ խուժում են մեր վրա:	-Ի՞նչ են ցանկանում այլազգիք մեր լեռներում... Հոմայեցոց մարմինը պատած է երկաթով, իսկ մենք մերկ ենք...
Մեր պատիվն ու ազատություն Մեզնից խլել են ուզում. Իրենց պետի չար բերանից Ի՞նչ խոսքեր են մեզ ասում:	Նրանք կամենում են ոչնչացնել մեր պատիւն ու ազատութիւնը:
Պատանիներ՝ մեր գեղեցիկ, Մեր լուսեղեն աղջիկներ՛ր, Նրանց ծառա պիտի լինիք, Նրանց կանանց՝ նաժիշտներ:	Նրանք ասում են, թէ մեր մատաղահաս աղջիկեքը սիրուն ու գեղեցիկ են, մեր երիտասարդները քաջ և ուժեղ են, և ուզում են տանել նրանց աշխարհի իշխանի ծառայութեան համար:
Մեր հայրենի ազատության Կաղնին չուզեց խոնարհվել, Վայրագ ոխով կուգեն հիմա Մեր վեհ կաղնին խորտակել:	Էսկալիայի ազատութեան ծառը ասում է աշխարհին. «դու շատ վախկոտ ես», և այս պատճառով ուզում են կտրել, ոչնչացնել նրան:
Դո՛ւրս մեր երկրից, դո՛ւրս, գազաններ, Մեր հին հողը մի՛ պղծեք, Կորչելու չէ մեր հայրենիք, Քանի կռվել մենք գիտենք:	Դո՛ւրս, հոմեացիք, դո՛ւրս այստեղից: Մենք քիչ ենք թուվ, բայց մենք չենք վախենում ձեզնից, որովհետև մենք բոլորս դարձյալ եղբայրներ ենք:
Ապառաժներ մենք կպոկենք Մեր երկաթե լեռներից, Ու ձեր գլխին վար կթափենք, Ձեզ կվանենք մեր տնից:	Բայց մենք կը բարձրանանք մեր լեռների գլուխը, կըջարդենք ժայռերը ու կթափենք թշնամու գլխին: Երբ թշնամին կըսկսի փախչիլ, մենք վեր կը գանք լեռներից, կը հալածենք նրանց մեր կարճ տէգերով:
Տեսե՛ք մեր մուր երկնում ծագեց Ազատության աստղն ահա. Մեր հին կաղնին նորից ծաղկեց Եվ ծփում է մեր վրա:	Նայեցեք, բասկեր, կապոյտ երկնքի վրա լուսին է փայլում և ուղարկում է դէպի երկիրը իր արծաթափայլ լոյսը: Աղօթենք Աստծուն, որ նա ոյժ տա մեր դաշնակցութեանը ու փրկի Էսկալ-Էդիան...

ԱԼՎԻՆԱ ԱՐԱՄՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու